ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

Ք. Գավառ *24.02.2025թ.*

Գավառի համայնքապետարանում տեղի ունեցավ «ԲԱՅԱԶԵՏ ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում նախատեսվող 8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցմաննախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Մասնկացում էին Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի համայնքապետարանի, Գավառի ավագանու անդամների, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, փորձագետներ և բնակիչներ /մասնակիցների ցանկը կցվում է/:

«Գեոէկոնոմիքս» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի տեղակալ Ռաֆայել Քոչարյանը ներկայացրեց ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը:

«Էկովիլ» ՍՊԸ-ի գլխավոր ինժեներ Հարություն Ավագյանը՝ նախագծին վերաբերվող մանրամասներ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչները և բնակիչները ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը:

Կարևորելով ծրագրի հատկապես սոցիալական բաղադրիչը՝ հանրային լսման մասնակիցները իրենց դրական կարծիքը հայտնեցին իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչ, համայնքի ղեկավարի օգնական Արծրուն Դվոյանը եզրափակիչ խոսքում ողջունեց Գավառ համայնքում ֆոտովոլտային կայանի կառուցումը և նշեց, որ համայնքապետարանը պատրաստակամ է հետագա աշխատանքներում ևս աջակցելու ծրագրի իրականացմանը:

Նիստի արձանագրող՝ **Գավառի համայնքապետարանի**

մամուլի քարտուղար՝ **Ա. Մանուկյան**